ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
НАЧАЛЬНИК АППАРАТА
АРАРАТСКОЙ ОБЛАСТНОЙ
АДМИНИСТРАЦИИ

ք. Արտաշատ , Օգոստոսի 23-ի փ./60
Հեռ. /0235/ 2-11-26

N 2/3/ք-2/577517 "12" 09 2017 թ.

<<Մոնոլիտ Կապիտալ Շին>> ՍՊԸ-ի տնօրեն
պարոն Է.Մանուկյանին
**Հասցեն՝ ք.Երևան, Ամիրյան 4/7**

*Հարգելի պարոն Մանուկյան*

ՀՀ Արարատի մարզպետարանի կարիքների համար 19.08.2016թ. <<Մոնոլիտ Կապիտալ Շին>> ՍՊԸ-ի հետ կնքվել է թիվ <<ՀՀԱՄ-ԲԸ-ԱՇՁԲ-16/05>> ծածկագրով պայմանագիրը՝ Գեղանիստ համայնքի մանկապարտեզի վերանորոգում-12757220 դրամ, Շահումյան համայնքի միջնակարգ դպրոցի ընթացիկ վերանորոգում-20076530 դրամ և Արմաշ համայնքի միջնակարգ դպրոցի 3-րդ մասնաշենքի 2015թ. սկսված ներքին հարդարման աշխատանքներն ավարտին հասցնելու և 2-րդ մասնաշենքի վերանորոգում-13342370 դրամ արժեքներով:

Աշխատանքները նախատեսված էին ավարտելու 2016թ. հոկտեմբերի 19-ին, սակայն կապալառու կազմակերպության կողմից սահմանված ժամկետում չի ավարտվել և ՀՀ կառավարության 16.02.2017թ. թիվ 153-Ն որոշմամբ աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 2017 թվականի հուլիսի 31-ը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սահմանված ժամկետում աշխատանքները չեն ավարտվել և պատվիրատուին աշխատանքների հանձնելը դարձել է ակնհայտ անհնար, ուստի հիմք ընդունելով պայմանագրի 3.1.4 կետի <<ա>> և <<բ>> ենթակետերը, միակողմանի լուծել 19.08.2016թ. թվականին <<Մոնոլիտ Կապիտալ Շին>> ՍՊԸ-ի կնքված <<ՀՀԱՄ-ԲԸ-ԱՇՁԲ-16/05>> ծածկագրով գնման պայմանագիրը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Մ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Կատ.՝ Գ.Եղիազարյան
Հեռ. /0235/ 2-05-77